Մրցույթ՝ Արմավիր մարզի «Մեծամորի Սաշա Գալստյանի անվան վարժարան» ՊՈԱԿ-ի (ք. Մեծամոր 2-րդ թաղամաս 2/36) աշխարհագրություն (8 ժամ), պատմություն (22 ժամ), հայոց լեզու և գրականություն (22 ժամ), մաթեմատիկա (9 ժամ), ֆիզիկա (12 ժամ), ֆիզկուլտուրա (9 ժամ),ՆԶՊ (12 ժամ), կերպարվեստ (4 ժամ), տեխնոլոգիա (4 ժամ), երաժշտություն (4 ժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակը համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 10-ին՝ ժամը 15:30-ին**, ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամորի Սաշա Գալստյանի անվան վարժարան» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (+374) 44120424 հեռախոսահամարով: